



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՎԿԵԱՆ

Ապրիլ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 12820

Փետրուար 25, 1966

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Ժ. Վրդ. Գրպրքսւեան
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Նարեկ Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուածան ծխական Խորհուրդի
Գլխավէնտ.

Սիրելի Հայր Վազգէն,

Ստացած ենք Ձեր 1966 Փետրուար 15 թուակիր տեղեկագիրը, որով
կը տեղեկացնէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ Փետրուար 18ին գումարուած
Ձեր Տարեկան ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի
մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան քրդիւնքը, կը
խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է թեմական Կա-
նոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած
է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները իբրեւ անդամ ծը-
խական Խորհուրդի.

Տիարք՝ Ռաֆֆի Չաքրրեան
Տոփսէփ Միխիթարեան
Յակոբ Խաչերեան
Սէմ Դաւիթեան
Օպի Պաղտասարեան

Կը յանձնարարենք որ Ձեր տարեկան տեղեկագիրը եւ հաշուեկշիռը
Առաջնորդարան դրկէք փութով:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ
Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի
մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայն-
քիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի